

ՀՏԴ 82. (479.25)

Գրականագիտություն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՆԵՐ Ռուգանա ՄԱԻՅԱՆ

Բանալի բանը՝ Գրական նոր սերունդ, իրականություն, ապամարդկային, ողբերգական անհատ, սուրճնք հեղինակ, զավեշտալի, երջանկության փնտրտուք, ապրած օր, համընթաց, կյանք, ցավ, մերկություն:

Ключевые слова: новое литературное поколение, реальность, бесчеловечный, трагическая личность, поиск счастья, прожитый день, параллельно, жизнь, боль, нагота.

Key words: new literary generation, reality, inhuman, tragic personality, pursuit of happiness, search of happiness, passing day, parallel, life, ache, nakedness.

Р. Саиян

Поэтический мир Ованнеса Григоряна

Своеобразный стихотворный стиль, воспевающий трагическую личность поэзии Ованнеса Григоряна, утверждает любовь к каждому дню, дарованному Богом.

Ценя таинство и чудо бытия, поэт живет в реальности, пытаясь найти в каждом прожитом дне признаки счастья, потому что «счастье - это то, что мы теряем каждый день».

R. Sayiyan

The Poetical World of Hovhannes Grigoryan

Hovhannes Grigoryan's peculiar poetic style, which carols tragic personality, claims to love every god-given day. Appreciating the miracle and mystery of life, the poet lives in reality trying to find in each passing day the signs of happiness as "happiness is what we lose every day."

Հովհաննես Գրիգորյանն իր ինքնատիպ բանաստեղծական աշխարհով եկավ հաստատելու, որ անչափ շատ է սիրում Աստծո ստեղծած ամեն օրը, նրա մեջ ապրող ողբերգական անհատին:

Բանաստեղծն ապրում է իրականության մեջ, գնահատում գոյության առեղծվածային հրաշքը, փորձում միավորել մարդն ու նրա ապրած օրը՝ ծնունդ տալով երջանկությանը, որպեսզի տաճնապաշտ չաղաղակի. «Երջանկությունը այն է, ինչ մենք կորցնում ենք ամեն օր»:

XX դարի 60-ական թվականների գրական նոր սերունդը, շղթայակապվելով Նարեկացի-Վարդան-Չարենց-Սևակ հանգույցին, ազդարարեց գրականության մի նոր սկզբի մասին, քանզի տասնամյակներ շարունակ թաքուն ու բացահայտ եղանակներով արգելված գրականության համար եկել էին այնքան սպասված ազատության օրերը:

Իսկ գրականությունը ազատ ու անկախ է նրանով, որքանով ազատ է ստեղծագործողն իր էությանը, մտածողությանը, անհատականությանը: Ահա թե ինչու Հովհաննես Գրիգորյանը կտրուկ շրջադարձի, մեծ վերափոխությունների անհրաժեշտություն չունեցավ: Նա շարունակեց գրել ու ապրել այնպես, ինչպես գրել ու ապրել էր՝ հարստացնելով թեմատիկ բազմազանության սահմանները, առավել խորունկ ու բազմաշերտ դարձնելով բանաստեղծական այն գրիգորյանական աշխարհը, որը չէր շփոթեցնի մեկ ուրիշի հետ...

Բանաստեղծական նոր սերունդը՝ ի դեմս Հովհաննես Գրիգորյանի, Հենրիկ Էդոյանի, Արտեմ Հարությունյանի, Դավիթ Հովհաննեսի և ուրիշների, իրենց բանաստեղծական համապարփակ ընկալումներում հաստատեցին, որ պոեզիան վաղուց հրաժարվել է պատահական ու անցողիկ զգացումների արձագանքը լինելուց: Այն ոչ թե «զեղեցիկ սուտ է», այլև «ճշգրիտ գիտություն», կեցության բարձրագույն ձև:

Ուստի, բարձրագույն ձևին հասնելու ճանապարհին պետք է հենվել պատմական փորձին՝ այնտեղից առանձնացնելով այն շերտերը, որոնք արդի ընկալումներում կբացվեն նոր կողմերով. «Մենք միշտ հնից ենք նորը սարքում», - գրում է Հ. Էդոյանը՝ այս ընկալման մեջ տեսնելով աշխարհաճանաչման փիլիսոփայությունը:

Արմատներ ձգելով անցյալի գրական հարուստ շերտերում՝ նրանք շարժվեցին ժամանակաշրջանին համընթաց՝ աշխարհընկալման և մարդաբանման նոր ընկալումներով, նոր արտահայտչամիջոցներով, բառիմաստի ներքին դինամիզմով, ենթատեքստային բազմազանությամբ, որն էլ դարձավ որոշ գրաբնադատների համար անընդունելի:

Պատահական չէ 60-ականների սերունդը այնքան ամուր ագուցվել վերոհիշյալ շրջայի վերջին բանաստեղծին՝ Պ.Սևակին, որի կանխատեսումները պիտի դառնային նրանց ընկալման գաղտնի կոդը. «Լզան նորերը և, խոսելով նորի ու արդիականի անունից, կպահանջեն իրենցը: Նրանց կշփացնեն, նրանց բանաստեղծ չեն համարի, նրանց բերանը կփակեն գուցե և անունով, նրանց գրածները կհամարեն չոր-խելոք ինչ ուզում ես ասա, բայց ոչ բանաստեղծություն», «օրիգինալության մարմանը» և այլն,- բայց ճիշտ կլինեն նրանք: Եվ այսօրվանից էլ ես նրանց հետ եմ, ես օրհնում եմ նրանց ճանապարհը...»¹:

Նորի ու արդիականի իր նոր արվեստը բերեց Հովհ. Գրիգորյանը. իրականությունն ու նրա մեջ ապրող մարդուն խորաթափանց մերձենալուց հետո բանաստեղծը խուսանալից նրանցից՝ դուրս գալով նրանց դեմ, ստեղծելով ապամարդկային մի այլ իրականություն, որտեղ համընդհանուր աղադակը չի խանգարում անհատին հաղորդակցվելու իր ներաշխարհի հետ, որն էլ դարձել է բանաստեղծի ողբերգության պատճառը:

Խաբուսիկ է այն իրականությունը, որի մեջ ապրում ենք մենք, որին սովոր է մեր աչքը, իսկ մաքուրը, անտեսանելին, գերազանցում է կատարյալ ձևով, որին կարող է հասնել միայն միտքը. «Իրականությունը,- գրում է Լ. Օրտեգա-Ի-Գասեթը,- անընդհատ հսկում է արվեստագետին՝ վերջինիս փախուստը խափանելու համար: Ինչքան խորամանկություններ պիտի բանեցնել հանճարեղ փախուստի համար»²:

Հովհաննես Գրիգորյանը, այնուհանդերձ, իր հաջող փախուստով հաստատում է, որ սիրում է Աստծո ստեղծած ամեն օրը, նրա մեջ ապրող, «այնիրականության» գոհ, իր ներաշխարհի հետ հաղորդակցվելու ունակությունից զրկված ողբերգական անհատին: Այդ մեծ սիրուց ծնված ողբերգության սահմանն էլ հատվում է սուրգենք հեզնանքով, որին հասել է բանաստեղծը, քանզի նա զավեշտախաղ է ընդունում այն ամենը, ինչ ունանց համար վեհ ու վսեմ է՝ դրանով իսկ թեթևացնելով կյանքի բեռը. «Ավելի հեշտ է ապրել՝ պատասխանատու չլինելով կյանքի համար և հեշտ է ապրել՝ հաշվի չնստելով արվեստի հետ»³, - հաստատում է Մ. Բախտինը:

Հովհաննես Գրիգորյանի ու նրա սերնդակիցների բերած նոր արվեստը պահանջում է նոր ընկալունակություն, գեղարվեստի ըմբռնման հատուկ ձիրքերով օժտված նոր սերունդ. «Ես շատ եմ կասկածում,- գրում է Օրտեգա-Ի-Գասեթը,- որ ժամանակակից երիտասարդին կարող են հետաքրքրել բանաստեղծությունը, վրձնահարվածն ու հնչյունը, եթե դրանց մեջ հեզնական ռեֆլեքսներ չկան»⁴: Յուրաքանչյուր բանաստեղծ իր ստեղծած անիրական հորիզոններում երջանիկ պահերի շինարար է դառնում, արարում, արարում ու դնում է բանաստեղծական վերջակետը՝ առանց տեսնելու երջանիկ կեցության մեջ գտնվողին: Մարդկային երջանկությունը փնտրելու համար մտնում է իրերի ու առարկաների խորքերը, խոսքեր է հանում իր մասին ճշգրտ լռության միջից, անցյալից ներկա է դառնում, ներկայից՝ ապագա և հավերժության հունը չգտնելով՝ կրկին ետ է գալիս իր ժամանակների երկիրը, քանում սուրճի մրուրը, վառում գլանակը... Իսկ Հովհ. Գրիգորյանը, թեկուզ երջանկության փնտրտուքների մեջ, բայց ոչ մի տեղ չշտապեց, առանց երաժշտության էր ուզում ներկայացնել իր երգերը, որպեսզի ապրած պահը ընկալվի.

Երջանկությունը այն է,
ինչ մենք կորցնում ենք ամեն օր
և այն, ինչ մենք կորցնում ենք ամեն ժամ,
երբ ձեռքերդ մեկնած ցանկալի ուղղությամբ

¹ Պ. Սևակ, Երկեր, հ. 3, Սով. գրող հրատ., 1985թ. էջ 578

² Լ. Օրտեգա-Ի-Գասեթ, Մշակույթի փոխտփայություն, «Ապրոն» հրատ. 1999թ. էջ 150

³ Մ. Բախտին, Արվեստը և պատասխանատվությունը, «Գեար», 2002թ., թ. 3

⁴ Լ. Օրտեգա-Ի-Գասեթ, Մշակույթի փոխտփայություն, «Ապրոն» հրատ., 1999թ., էջ 175

անհրաժեշտ բառեր են որոնում
արցունքներդ մեկնաբանելու համար¹:

1975-ին «Երգեր առանց նրաժշտության» բանաստեղծական գրքույկով հանդես եկած բանաստեղծը փորձում էր քայլել առօրյայի միջով՝ չկորցնելով մարդկային վեհագույն կեցվածքը, որի մեջ խնդրող հեղինակն էր կա. «Դժվար է նրջանկությունը պահել երկու ձեռքերով, երբ աչքերիդ մեջ արցունքի կաթիլներ կան»: Երջանկության ափերին հասնելու մշտահողով ձգտումը ու նրա մասին փիլիսոփայական տաղտուկ վեճերը ի չիք են դառնում, երբ կա ընդամենը մի քանի ճշմարտություն երջանկության շուրջը, որ այդ անունով ծառ չկա աշխարհում, չկա աշխարհում այդ անունով թռչուն, և միայն գազան, որն ուտում է մյուսին առավոտյան նաև կեսօրին, ապա՝ երեկոյան... Իսկ արդարության ու խաղաղության անունով ոչ ծաղիկ կա հողում, ոչ ձուկ է լողում ծովում, ոչ աստղ է շողում: Այլ՝

....կա միայն բնագոյը, որ խնայանում է արյան բույրից,
իսկ հետո...շատ ճիշտ է...նույն պատմությունն է սովորական՝
առավոտյան, կեսօրին, երեկոյան...

Եվ ո՞վ է այս մի քանի դաժան ճշմարտությունների հեղինակը, որն իր ընկալումներում ծաղկեցնում է երջանկության ծաղիկները.

Ես ձեզ կասեմ, որ ես ոչինչ եմ փոքրատառով,
... Ավելի ոչինչ, քան թե նրանք,
ովքեր ելնում իջնում են ավտոբուսները, ովքեր քաղաքային թերթերն
են
կարդում՝ առաջինից մինչև վերջին տառը,
ովքեր խանութից խանութ են անցնում անվերջ՝
դատարկ տոպրակները գրպանները խրած
ովքեր գլխահակ ու արագ անցնում են պատերին
ու պոստերին փակցրած
հայտարարությունների կողքով, գույնզգույն ափիշների
և իմ կողքով, չնայելով ու չնկատելով ինձ, նույնիսկ,
երբ իմ միջով են անցնում...²

Մարդերգության առանցքը կորցրած, մարդակերպից խուսանաված բանաստեղծը հաստատում է. «Ամենադժվարը առաջին հազար տարին է, հետո ամեն ինչ դառնում է սովորական» այսինքն, կրկին՝ առավոտյան, կեսօրին, երեկոյան գործում է նույն բնագոյը... Ուրեմն կարելի է լինել բանաստեղծ և անշեղ նայել այն ամենին, ինչ վաղուց կա ու ընտելանալ դրան, բայց դրանից հետո է, որ դու կորոնես

... մի խաղաղ անկյուն
գտնելու հույսով, որտեղ կարելի է նստել
մենակ ու հանգիստ,
ծխել ու մտածել դանդաղորեն մաշվող մի
կյանքի մասին,
և երջանկության մասին ծխել ու մտածել,
և հետո կսկսես անհրաժեշտ բառեր որոնել
հանկարծակի հայտնված արցունքներդ
մեկնաբանելու համար...³

Իսկ արցունքների հանկարծակի հայտնվելը պատահական չէ, նրանք անցնող կյանքի, հանգչող պահի արձագանքներն են: Բանաստեղծի սերն առ կյանքն ու մարդը գալիս են լցվելու ամեն ինչի մեջ և համոզվելու.

Երջանկությունը այն է

¹ Նովի. Գրիգորյան, Երգեր առանց նրաժշտության, «Սով. գրող» հրատ., 1975թ., էջ 34

² Նովի. Գրիգորյան, Նրեշտակներ մանկության երկնքից, «Նաիրի» հրատ., 1992թ., էջ 18

³ Նովի. Գրիգորյան, Երգեր առանց նրաժշտության, «Սով. գրող» հրատ., 1975թ., էջ 34

Ինչ մենք կորցնում ենք ամեն օր,
և այն, ինչ մենք կորցնում ենք ամեն ժամ...¹

Աստծո ստեղծած օրն ու ժամը արդեն բանաստեղծին է՝ ճանաչված իր բոլոր կողմերով, տարվա բոլոր եղանակների, բոլոր պահերի մեջ: Ընկալված, երբ հրաժեշտ կա, սպասում, անորոշություն... Առանց երաժշտության գրված երգերը մեղեդի կունենան այն ժամանակ, երբ կմիավորվեն մարդն ու նրա ապրած օրը՝ ծնունդ տալով երջանկությանը: Իսկ մինչ այդ բանաստեղծը մի գլխիկոր ջութակահար է՝ կանգնած գետափին ու սպասում է այն հարմար եղանակին, երբ մեղեդին երկինք կհասնի: Այդ եղանակը «Բոլորովին ուրիշ աշունն է»: Եվ այս ժողովածուի գողտրիկ բանաստեղծությունը գալիս է հաստատելու, որ գետնի վրա լողացող ջութակը մեր հոսող օրն է, որը կարող է լիացնել մեր հոգին, եթե նրան սիրենք նույն մերկությամբ:

Բայց ինչ ջութակ էր դա՝
ամբողջովին ծաղկանկար,
անչափ գեղեցիկ և անմահ մի բան:
Իսկ գետի ափին կանգնած է
մի ջութակահար:
Բայց ինչ ջութակահար է դա՝
ամբողջովին արցունքների մեջ կորած:
Իսկ հեռու- հեռվից
նրան է մոտենում մի աղջիկ.
մերկ, ինչպես երաժշտությունը
և գեղեցիկ, ինչպես ջութակը ծաղկանկար:
Իսկ երբ լուսինը դուրս եկավ,
գետում խայտացին բոլոր ջութակները,
և մի մեղեդի բարձրացավ երկինք՝
ամբողջովին արցունքների մեջ կորած²:

Ամբողջ ժողովածուում համընթաց քայլում են կյանքն ու մահը, սերն ու ցավը, այդ իսկ պատճառով է բոլորովին ուրիշ Ն. Գրիգորյանի աշունը, բոլորովին ուրիշ նրա անձրևը. «Երբ երկարում ես ձեռքդ, անձրևն է արտասվում ափիդ մեջ»: Արտասվում է, որովհետև «... դժվար է ապրել առանց ասելու՝ սիրելիս...»:

Իսկ մինչ աշունը կհնչեցնի իր վերջին երգը.
... կլինի գեղեցիկ առավոտ,
և, բոլոր պատուհանները կբացվեն:³

Եվ այդտեղ ապրող սերն ու ցավը քեզ կհամոզեն.

... և սերն ու ցավը քեզ ասում են՝ ապրիր
և ամպերն ու արևը, և անձրևն ու վիշտը, և
աստղերն ու քամին.
բոլորն են այստեղ, քեզ հետ են, ինչ արած:⁴

¹ Նույն տեղում, էջ 34

² Նույն. Գրիգորյան, Բոլորովին ուրիշ աշուն, «Սով. գրող» հրատ, Եր. 1979թ., էջ 46

³ Նույն տեղում, էջ 23

⁴ Նույն տեղում, էջ 83

Գրականություն

1. Հովհ. Գրիգորյան, «Բոլորովին ուրիշ աշուն», «Սովետական գրող» հրատ., 1979թ.
2. Հովհ. Գրիգորյան, «Հրեշտակներ մանկության երկնքից», «Նաիրի» հրատ., 1992թ.
3. Հովհ. Գրիգորյան, «Երգեր առանց երաժշտության», «Սովետական գրող» հրատ., 1975թ.
4. Խ. Օրտեգա-Ի-Գասեթ, «Մշակույթի փիլիսոփայություն», «Ապոլոն» հրատ., 1999թ.
5. Մ. Բախտին «Արվեստը և պատասխանատվությունը», «Գեart», հրատ., 2002թ., թ. 3
6. Պ. Սևակ, երկեր, հ.3 «Սովետական գրող» հրատ., 1985թ.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ռուզաննա Սաիյան – ԱրՊՀ ասպիրանտ, հայ գրականության և լրագրության ամբիոն

E-mail: Saiyan84@mail.ru

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեկիայի անդամ, բ.գ.դ. Ս. Խանյանը: